ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԺԱԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ԺԱԳ ՅԱԿՈԲԵԱՆ, ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ, ԱՄՆ

Փառք Բարձրեալին, որ օրհնել եւ օրհնում է մեր ազգը գրի ու գրականութեան անխոնջ մշակներով, ովքեր Աստուածպարգեւ իրենց կեանքը արդիւնաւորում են գրական անմահ յուշարձաններ կերտելով:

Մեծարգոյ Տիար Յակոբեան,

Ծնունդով Տէրունական Երուսաղէմում կայք հաստատած հայ ընտանիքի ծոցում, ապա ուսում եւ կրթութիւն ստանալով հայ հոգեւոր-մշակութային հարուստ կեանքով ու աւանդոյթներով ապրող Եգիպտահայ գաղթօջախում՝ Դուք բանաստեղծի երկնատուր Ձեր տաղանդը շաղախեցիք համամարդկային եւ ազգային-հայրենասիրական յաւերժական արժէքների խորը ապրումներով ու գոյներով՝ գրական ասպարէզ մուտք գործելու առաջին իսկ քայլերից արժանանալով ժամանակի հայ մեծանուն գրականագէտների ուշադրութեանը: Կեանքի փոթորկայոյզ ալիքները ուր էլ տարագրեցին Ձեզ, այնտեղ Դուք շարունակեցիք մտաւորականի Ձեր ընթացքը եւ սփիւռքահայ իրականութեան մէջ եղաք հայ գրի ու գրականութեան տարածողը, թարգմանը եւ ուսուցիչը: Արդարեւ, Ձեր գրչին պատկանող չափածոյ եւ արձակ բազմաժանր ստեղծագործութիւններով Դուք հարստացրեցիք արեւմտահայ բանաստեղծական արուեստի գանձարանը՝ դասուելով հայ վաստակաշատ բանաստեղծների շարքին:

Ուրախ ենք, որ այսօր եւս ստեղծագործական Ձեր գործունէութեանը զուգահեռ Ձեր օգտակարութիւնն էք մատուցում ԱՄՆ Արեւմտեան թեմի ազգային-եկեղեցական կեանքում՝ որպէս ուսուցիչ Աստուածաշնչային սերտողութիւններ կազմակերպելով տեղի Կիրակնօրեայ դպրոցներում՝ ի նպաստ մատաղ սերնդի հայեցի եւ հոգեւոր դաստիարակութեան:

Մեծարգոյ Տիար Յակոբեան, ի գնահատութիւն Ձեր գրական եւ մանկավարժական երկարամեայ նուիրեալ գործունէութեան եւ ընդառաջ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին, Հայրապետական

այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Լիայոյս ենք, որ սոյն պարգեւը նոր խրախոյս պիտի լինի վաստակեալ մտաւորականիդ՝ շարունակելու ազգօգուտ եւ եկեղեցանուէր Ձեր գործունէութիւնը:

Համայն հայոց սրբազնասուրբ կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը եւ աղօթում, որ Սուրբ Սահակ Հայրապետի եւ Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետի բարեխօսութիւնը հանապազ ուղեկից լինի Ձեզ՝ պարգեւելով ստեղծագործական նորանոր ներշնչումներ եւ ամենայն բարիք: Այլեւ մաղթում ենք, որ Աստուած Իր օրհնութեան մէջ քաջառողջ եւ երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ՝ ի պայծառութիւն մեր Եկեղեցւոյ եւ ի բարօրութիւն աշխարհասփիւռ մեր ժողովրդի:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 10-ն Օգոստոսի
Ցամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 246